

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐ

- ՅՈՂԱՆ ՎՈԼՖԳԱՆԳ ԳՅՈԹԵ. «Մինյոնայի երգը», 1793-1796 թթ.
ՋՈՐՋ ԳՈՐԴՈՆ ԲԱՅՐՈՆ. «Աբիդոսյան հարսնացուն», Առաջին երգ,
առաջին մաս, 1813 թ.
ԱԼԵՔՍԵՅ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՎԻՉ ՏՈԼՍՏՈՅ. «Դու ճանաչո՞ւմ ես երկիրը,
ուր ամեն ինչ առատությամբ է շնչում», 1840-ական թթ.
ՀՈՎՀԱՆՆԵՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. «Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա», 1880 թ.
ԻԳՈՐ ՄԵՎԵՐՅԱՆԻՆ. «Իսկ ճանաչո՞ւմ ես երկիրը», 1907 թ.
ՀՈՎՀԱՆՆԵՄ ԹՈՒՄԱՆՅԱՆ. «Parodia Հովի. Հովհաննիսյանի «Իմ հայրենիքը տեսե՞լ
ես, ասա» բանաստեղծության», 1910 թ.

Բանայի բառեր՝ հայրենիք, հայրենասիրություն, հայրենի բնություն, բնության գեղեցկություն, ոգեշնչում, աղետ, աղքատություն, հիասթափություն, գեղարվեստական դիմանկար, ողբերգություն, պատմություն, ժամանակ, Թումանյան, Սևերյանին, Ա. Ն. Տոլստոյ, Բայրոն, Գյոթե

Համաշխարհային գրականության մեջ կան երկեր, որոնց ստեղծագործական պատմությունն ինքնին շատ հետաքրքրական լինելով՝ նաև ուշագրավ են որպես ավանդույթի հետագիծ և ժառանգորդական շղթա ստեղծող արժեք, ուստիև կարևոր իբրև գեղարվեստի մշակութաբանական զարգացման մի յուրահատուկ էջ: Այդպիսին է Գյոթեի «Մինյոնայի երգը» բանաստեղծությունը, որի արձագանքները հնչել են անգլիացի, ռուս, հայ հեղինակների երկերում, իսկ հետո վերարձագանքել հաջորդ սերունդների գրողների ստեղծագործության մեջ: Այդ արձագանքը փոխանցվել է դարերի, լեզուների, գեղարվեստական տարբեր ավանդույթների միջով և ստեղծել բանաստեղծական լույսի անդրադարձումների մի ուրույն հետագիծ:

Այս տեսակետից գրապատմական ուշագրավ շերտեր է բացում Թումանյանի «Parodia»-ն: Լինելով Հովհաննիսյանի «Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա» բնաբանով հայտնի բանաստեղծության ծաղրանմանությունը՝ այն նաև արձագանքում է Ի. Սևերյանինի նույնաբնույթ «Իսկ ճանաչո՞ւմ ես երկիրը» ստեղծագործությանը, ինչն իր հերթին անդրադարձ է Ա. Տոլստոյի «Դու ճանաչո՞ւմ ես երկիրը, ուր ամեն ինչ առատությամբ է շնչում» գործի: Մրա հիմքերն էլ գալիս են Գյոթեի «Մինյոնայի երգը» չափածո երկից և Գյոթեին անմիջականորեն արձագանքող Բայրոնի «Աբիդոսյան հարսնացուն» պոեմի մուտքից:

Ինչ փոխանցումներ են տեղի ունեցել, և ինչպե՞ս է Գյոթեի քերթվածն արձագանքել ու վերարձագանքել հետնորդների երկերում:

Հ. Հովհաննիսյանի նշված բանաստեղծությունը նրա պատանեկան տարի-

ների առաջին փորձերից է՝ գրված 1880 թ. հոկտեմբերի 17-ին: Հովհաննիսյանի երկերի գիտական հրատարակության կազմող ու ծանոթագրող Նշան Մուրադյանն այս գործի մասին գրել է. «Ումի՞ց է մղումն ստացել երիտասարդ Հովհաննիսյանն այս ոտանավորը հորինելիս, Լերմոնտովի՞ց, Շահագիզի՞ց, թե՞ հենց Գյոթեից, որի մի տողը իբրև բնաբան է վերցրել նա, – մի հարց է, որին էական նշանակություն չպետք է տրվի: Կարևորն այն է, որ նա ստեղծել է բոլորովին ինքնուրույն մի գործ»¹:

Ուսումնասիրողը հիշատակում է գրողների անուններ՝ առանց նշելու որոշակի գործերի վերնագրեր, միաժամանակ ասում, որ «էական նշանակություն չպետք է տրվի» սկզբնաղբյուրին: Անտարակույս, նման մոտեցումը սխալ է, քանզի բանասիրության մեջ անէական մանրամասներ չկան, մանավանդ որ խոսքը վերաբերում է նշանավոր գրողների:

Հարցի քննությունը հանգեցնում է այն համոզման, որ Հովհաննիսյանի բանաստեղծությունն անմիջական արձագանք է Ա. Տոլստոյի «Դու ճանաչո՞ւմ ես երկիրը, ուր ամեն ինչ առատությամբ է շնչում» երկի՝ գրված 1840-ական թթ. և տպագրված 1854-ին:

1877-1888 թթ. ուսանելով Լազարյան ճեմարանում և Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրական բաժանմունքում, լինելով ռուսական պոեզիայի գիտակ ու թարգմանիչ՝ Հովհաննիսյանը, բնականաբար, կարող էր ծանոթ լինել բանաստեղծ, արձակագիր, թատերագիր Ալեքսեյ Կոնստանտինովիչ Տոլստոյի (1817-1875) գործունեությանը, թեև այդ մասին ուղղակի վկայություններ չի թողել:

Այդ տարիներին Հովհաննիսյանն արդեն գիտեր նաև Գյոթեին. 1881-ին թարգմանել է նրա «Ձկնորս», 1884-ին՝ «Օդն անվրդով է և խաղաղական» քերթվածները: Այսուհանդերձ, պարզ չէ՝ «Մինյոնայի երգը» հայտնի՞ էր նրան, թե՞ ոչ: Պարզ չէ, բայցև բացառված էլ չէ, ուստի հավանական է: Հիշեցնենք, որ Գյոթեի այդ բանաստեղծությունը զետեղված է «Վիլիելմ Մայստերի ուսումնառության տարիները» վեպի երրորդ գլխի սկզբում: Վեպն ամբողջությամբ գրվել է 1793-1796 թթ., տպագրվել՝ 1795-1796 թթ.: Գյոթեի երկերը հայտնի էին և տարածված, իսկ 1865-1871 թթ. Սանկտ Պետերբուրգում լույս էր տեսել նրա ստեղծագործությունների վեցհատորյա ժողովածուն:

Հաշվի առնելով Գյոթեի հիշյալ բանաստեղծության նշանակությունը հետաքրքրող հարցի պատմության մեջ բերում ենք ամբողջական տողացի թարգմանությունը.

*Դու գիտե՞ս երկիրը՝ կիտրոնի ծաղկած թավուտների,
Ուր արքայախնձորի կարմիրը կպչում է տերևներին,*

¹ **Հ. Հովհաննիսյան**, Երկերի ժողովածու, 4 հատորով, Ե., ԳԱ հրատարակչություն, 1964-1968, էջ 360:

Ուր Հարավի լիությամբ երկնականարն է շնչում.

Ուր ննջում է մրտենին, ուր դափնին է թովում:

Դու եղե՛ լ ես այնտեղ:

Այնտեղ, այնտեղ,

Իմ սիրեցյալ, մենք թաքնվենք մշտապես:

Դու տեսե՛ լ ես տունը: Հրաշալի եզրագարդը

Սյունաշարի բարձունքից մուտքի մոտ նայում է ներքև,

Եվ արձանները հարց են տալիս.

Այդ ցավը, մանկիկս, քեզ ո՞վ հասցրեց:

Դու եղե՛ լ ես այնտեղ:

Այնտեղ, այնտեղ,

Իմ հովանավոր, գնայինք ընդմիջտ:

Դու սարերից նայե՛ լ ես ամպերին ոտքերիդ մոտ:

Նրանց միջոցով վեր է բարձրանում ջորու ճիգով,

Քարայրների խորքում վիշապներն են Ֆշշում,

Որոտում է փլվածքը, ճողփում է ջրվեժը:

Դու եղե՛ լ ես այնտեղ:

Այնտե՛ դ, այնտե՛ դ

Արի գնանք, հայր իմ, ընդմիջտ²:

Լրացման կարգով ավելացնենք, որ այս անվերնագիր ստեղծագործությունը հայտնի է «Մինյոնայի երգը» վերնագրով, որովհետև վեպի հերոսուհի Մինյոնան, մտնելով Վիլհելմի սենյակը, երգում է այն: Նրանց միջև տեղի է ունենում այսպիսի զրույց: Մինյոնան, ակնդետ նայելով Վիլհելմի աչքերին, հարցնում է.

«– Դու գիտե՞ս այդ երկիրը:

– Թվում է՝ Իտալիան է,– պատասխանում է Վիլհելմը,– իսկ երգը դու որտեղի՞ց գիտես:

– Իտալիա,– շեշտով արտասանեց Մինյոնան:– Իտալիա գնալու լինես՝ ինձ տար հետդ»³:

Գյոթեի բանաստեղծության շունչն ու շեշտն առաջինը որսաց Բայրոնը: Նրա «Աբիդոսյան հարսնացուն» պոեմը՝ գրված Գյոթեի հիշյալ երկից շուրջ երկու տասնամյակ անց, բացահայտորեն կրում է մեծ գերմանացու ստեղծագործական ազդեցությունը, ինչն ակնհայտորեն երևում է պոեմի առաջին գլխի առաջին մասի թե՛ առանձին պատկերների մեջ, թե՛ ընդհանուր արևելյան

² **И. В. Гере**, Собрание сочинений. В 10-ти т., т. 7, М., “Художественная литература”, 1978, с. 117.

³ Նույն տեղը, էջ 118:

կողմնորոշման: Բայրոնի պոեմի այդ մասն ունի նախերգանքի, նախամուտքի նշանակություն: Հետագա բանաստեղծների համար Գյոթեի հետ մեկտեղ Բայրոնի երկը ևս դարձել է ավանդույթի հիմք և հնչել XIX դարի գրականության մեջ:

Քանի որ Բայրոնի պոեմի այդ հատվածը ևս մեզ հետաքրքրող հարցի պատմության տեսանկյունից ունի գրական սկզբնաղբյուրի արժեք, նաև հաշվի առնելով հայերենի բացակայությունը՝ ներկայացնում ենք տողացի ամբողջական թագմանությունը.

*Ո՞վ է ճանաչում երկիրը՝ հեռավոր ու գեղեցիկ,
Ուր նոճին է ծաղկում ու քնքշանվաղ մրտենին,
Եվ ուր դրանք որպես տեսիլք են աճում
Դաժան գործերի ու հեշտանքավառ երանության,
Ուր զգացմունքների նրբությունը մերձ է դրանց մոլեգնումին՝
Հանկարծ խաղաղ շահեն, բայցն տատրակ վայրի:
Ո՞վ է ճանաչում երկիրը, ուր երկինքը կապույտ
Անամպ է, ինչպես մատղաշ երջանկություն,
Ուր մայրին է խշշում, ոլորվում է որթատունկը,
Ուր բուրմունք տանող քամին
Իր բեռան տակ խեղդվում է եթերի մեջ,
Ուր ամբողջ հմայքով ծաղկում է վարդը,
Ուր քաղցրանուշ են ձիթապտուղն ու կիտրոնը,
Եվ մարգագետինը միշտ ծաղիկներով է նախշված,
Եվ սոխակը չի լռում անտառներում,
Ուր հրաշք է ամեն ինչ՝ պուրակների ու բացատների տեսքը,
Կապույտ կամարը և ծիածանագույն մշուշը,
Եվ ծիրանի ցղանքով փայլող օվկիանոսը:
Եվ աղջիկներն այնտեղ ավելի թարմ են բուրրող վարդերից՝
Շաղ տված իրենց ալիքավոր խոպոպներով:
Այդ երկիրը Արևե լքն է, հենց եզե՛րքը արեգակի,
Ամեն ինչ այնտեղ աստվածային գեղեցկությամբ է շնչում,
Բայց մարդիկ են այնտեղ անգութ հոգով.
Երկիրն ասես դրախտ է: Ավա՛դ: Ինչու է այն՝
Գեղեցիկը, ոճրագործների ն տրված:
Նրանց սրտում վրեժ է, նրանց պատմությունները տխուր են,
Ինչպես սիրո հառաչ, ինչպես հրաժեշտի համբույր⁴:*

Գյոթեի բանաստեղծության հետ համեմատության եզրերն ակնհայտ են առաջին հերթին արևելյան հեքիաթային աշխարհի գուներանգ ստեղծելու

⁴ Байрон, Собрание сочинений. В 4-х т., т. 3, М., 1981, с. 46-47.

ոգեղեն տարերքի ու ներշնչվածության մեջ: Ընդհանուրը համընկնում է նաև առանձին մանրամասներով: Նույնն է հարցումի շեշտը՝ «Դու գիտե՞ս այդ երկիրը...», «Ո՞վ է ճանաչում երկիրը...»: Նույնն է այդ երկրի հմայքը՝ «հեռավոր ու գեղեցիկ»: Նույնն է բնության շռայլ փարթամությունը՝ նկարագրելու հակվածությունը՝ «Ուր...» ծաղկում են մրտենին, նոճին ու դափնին, ուր մի առանձնահատուկ գրավչություն ունի արևելյան երկնակամարը:

Ի տարբերություն Գյոթեի՝ Բայրոնը սրում է հակադրությունը. մի կողմից՝ անկրկնելի գեղեցկության մեջ կորած դրախտի երկիր, մյուս կողմից՝ բիրտ բարքեր: Այստեղից էլ շարունակվում է ավանդույթի երկու գիծ: Գյոթեի ռոմանտիկական տարերքը պահպանեցին ու շարունակեցին Տոլստոյն ու Հովհաննիսյանը, իսկ բնության գեղեցկությունների և մարդկային դաժան իրականության հակադրությունը Բայրոնի ավանդույթներով ավելի սրեցին Սևերյանին ու Թումանյանը: Տարբեր էին ժամանակները. XIX դարի բռնկուն ու ոգեշնչված հայրենահիացումին հաջորդում է XX դարի սթափ հայացքը, երբ հայրենիքն այլևս ոչ միայն կարոտի հեռավոր եզերք էր ու գեղեցիկ բնաշխարհ, այլև ռոմանտիկական վարդագույն շղարշից ազատագրված դաժան իրականություն:

Ա. Տոլստոյի բանաստեղծության ծանոթագրության մեջ Ե. Պրոխորովը գրում է, որ հետազոտողների համար հանրահայտ և բոլորի կողմից ընդունված է այն տեսակետը, ըստ որի՝ Ա. Տոլստոյի «Դու ճանաչո՞ւմ ես երկիրը, ուր ամեն ինչ առատությամբ է շնչում» բանաստեղծությունը «ձայնակցում է» Գյոթեի հիշյալ գործին, սակայն «ո՛չ թարգմանություն է, ո՛չ էլ նմանություն», այլ, ինչպես նշել է Վ. Ժիրմունսկին, «կառուցվածքային հենք»: Ծանոթագրողը շարունակում է՝ Գյոթեի ստեղծագործության մեջ «արտասովոր հարավն է, շքեղ ապարանքը, խիստ լեռները», իսկ Տոլստոյը ներշնչված է հայրենի Ուկրաինայի գեղեցկություններով⁵:

Այսպես, ուրեմն, Ա. Տոլստոյը բացահայտորեն ներշնչված է Գյոթեից, իսկ Հ. Հովհաննիսյանն անմիջականորեն արձագանքում է Ա. Տոլստոյին, բացառված չէ՝ նաև Գյոթեին:

Ա. Տոլստոյի բանաստեղծությունը կազմված է վեցտողանի ութ տներից, այսինքն՝ բավականին ծավալուն է և ընդգրկում է 54 տող: Ամբողջ շարադրանքի համար հիմնային է «Դու ճանաչո՞ւմ ես երկիրը...» ելակետային սկիզբը, ինչն այդուհետև վեց անգամ կրկնվում է բանաստեղծության շարունակության մեջ և մեկ միջին մասում, մեկ վերջում ունենում բացականչական այսպիսի անդրադարձ. «Այնտե՛ղ, այնտե՛ղ եմ ամբողջ հոգով ես ձգտում»: Բանաստեղծությունն ամբողջությամբ սիրո, կարոտի, հիացմունքի ներբող է հայրենի բնությանն ու պատմությանը: Սկիզբն այս է.

⁵ **А. К. Толстой**, Полное собрание сочинений. В 2-х т., т. 1, “Советский писатель”, 1984, с. 531.

*Դու ճանաչո՞ւմ ես երկիրը, ուր ամեն ինչ առատությամբ է շնչում,
Ուր գետերը հորդում են արծաթից մաքուր,
Ուր տափաստանային հովիկը փետրախոտն է ծածանում,
Բալենիների թավուտներում թաղվում են խոտորները,
Այգիների մեջ ծառերը ճկվում են ներքև,
Եվ մինչև գետին կախվում է նրանց ծանր պտուղը:*

Այնուհետև հեղինակը ներշնչանքով պատկերում է լճափին սոսափող եղեգնը, պայծառ երկինքը, հնձվորի երգը, փարթամ անտառը: Երրորդ տունն սկսվում է զգացմունքային միջարկումով.

*Այնտե՛ղ, այնտե՛ղ եմ ամբողջ հոգով ես ձգտում,
Այնտեղ, ուր հոգին թեթև՝ է այնպես...
Եվ նորից նույն ոգեշունչ փառաբանությունը.*

*Դու ճանաչո՞ւմ ես երկիրը, ուր արտերը ոսկի
Նախշված են տերեփուկի կապույտով,
Տափաստանների միջև՝ Բարթուի ժամանակների սահմանաթմբեր,
Հեռվում՝ արածող եգների հոտեր...*

Հաջորդ չորս տները ևս սկսվում են «Դու ճանաչո՞ւմ ես երկիրը...» կրկներգով և շարունակվում բարձրագույն հիացմունքի զեղումներով.

*Դու ճանաչո՞ւմ ես երկիրը, ուր կիրակի առավոտյան,
Երբ ցողաշաղախ արևածաղիկն է փայլում,
Այնպես բարձր է հնչում արտույտի երգը,
Հոտը մայում է, իսկ զանգը դողանջում,
Եվ աստծու տաճարում, ծաղիկներով պսակված,
Գունագեղ խմբերով կազակուհիներն են գնում⁶:*

Հեղինակը հիշում է նաև Ուկրաինայի պատմության դրվագները, պատմական անուններ և խոսքն ավարտում «Այնտե՛ղ, այնտե՛ղ եմ հոգով ես ձգտում» կրկնվող բացականչությամբ:

Հիմա, որտեղի՞ց է գալիս Հ. Հովհաննիսյանի «Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա» բնաբանը: Ուղղակի շարադասությամբ այդպիսի տող չունեն ո՛չ Գյոթեն, ո՛չ Ա. Տոլստոյը: Անմիջական այլ սկզբնաղբյուրի բացակայության դեպքում ամենայն հավանականությամբ այն կա՛մ Գյոթեի «դու գիտե՞ս երկիրը...», կա՛մ Ա. Տոլստոյի «դու ճանաչո՞ւմ ես երկիրը...» կիսատողերի գեղարվեստական թարգմանություն է, ինչը և բազմել է բանաստեղծության ճակատին՝ դառնալով ներշնչանքի աղբյուր: Այդ տարիներին ծննդավայրից հեռու ապրող և ստեղ-

⁶ Նույն տեղը, էջ 53-54:

ծագործող բանաստեղծը, բնական է, կարոտով պիտի ոգեկոչեր հայրենի եզերքը: Անհարկի չէ հիշել, որ նույն՝ 1880 թ. ապրիլի 16-ին նա գրել է նաև «Իմ հայրենիքը» վերնագրով մի սևագիր բանաստեղծություն, որի մեջ կան այսպիսի տողեր.

*Իմ հոգին, իմ միտքը, իմ սիրտ
Հայաստանումն է սիրուն.
Ես այստեղ եմ, բայց մտքով
Միշտ այնտեղ եմ ես թռչում:
Ուր էլ որ գնամ՝ ես դարձյալ
Իմ սիրելի հայրենիքիցս
Ես չեմ կարող հեռանալ.
Նա մասն է իմ հեք սրտիս:*

*Հեք հայրենիքս՝ հեք է սիրտս,
Նա երջանիկ՝ ես նույնպես,
Նա կարտասովի՝ ես կո՛ղբամ,
Նա ուրախ է՝ կհրճվեմ ես:
Մնաս բարև, սրբազան,
Իմ թանկագին հայրենիք,
Գընում եմ, բայց չեմ մոռնա
Հիշատակը քո քաղցրիկ⁷:*

Այս բանաստեղծությունը լրացումով հուշում է, որ հայրենասիրական պայրումների թանձրացած հոգեվիճակը պաշարել էր հեղինակին և մի քանի ամիս անց պիտի վերածվեր «Իմ հայրենիքը տեսե՛լ ես, ասա»⁸ զգացմունքային լիցքով ներծծված հայրենասիրացումի:

Ա. Տոլստոյի բանաստեղծությանը համընկնում է Հ. Հովհաննիսյանի ստեղծագործության ամբողջ գեղարվեստական մթնոլորտը: Նույնն են ներշնչանքի աղբյուրը, ոգևորությունը, զգացմունքային գեղման ուղղվածությունը: Կան նաև առանձին պատկերների համընկնումներ: Հովհաննիսյանը ևս փառաբանում է իրենց բերք ու բարիքով «կանաչում թաղված այգիները», կապուտակ պայծառ երկինքը, դաշտերը, հովիտի մեջ կորած գյուղը, ոսկի արտերը, խաղաղ վտակը, արտույտի երգը, մարգագետինները, ծաղիկները: Ա. Տոլստոյի զարդարուն կազակուհիներին այստեղ փոխարինում է «Հարավո դուստրը, հրապույրն աչքերին»: Երկու բանաստեղծությունների պատկերային ընդհանրություններն ավելի ակնհայտ ցուցադրելու համար դիմենք զուգադիր համեմատության.

⁷ Հ. Հովհաննիսյան, նշված հրատարակությունը, հ. 1, էջ 124:

⁸ Նույն տեղը, էջ 11-12:

Ա. Տոլստոյ

1. Դու ճանաչո՞ւմ ես երկիրը...
2. Ուր գետերը հորդում են արծաթից մաքուր...
3. Ամեն ինչ առատությամբ է շնչում
4. Բալենիների թավուտներում թաղվում են խուտորները
5. Ուր տափաստանային հովիկը փետրախոտն է ծածանում
6. Բալենիների թավուտներում թաղվում են խուտորները
7. Եվ մաքուր, և խաղաղ, և պայծառ է երկնակամարը
8. Արտերը ոսկի
9. Այնպես բարձր է հնչում արտույտի երգը
10. Դու ճանաչո՞ւմ ես երկիրը, ուր կիրակի առավոտյան
... Աստծու տաճարում, ծաղիկներով պսակված
Գունագեղ խմբերով կազակուհիներն են գնում:

Հ. Հովհաննիսյան

1. Տեսե՞լ ես արդյոք այն բլուրները...
2. Ուր ճոխ ծաղկում է մշտական գարուն
3. Ճոխ ծաղկում է
4. Կանաչում թաղված այն այգիները
5. Ուր իբրև գոհար խաղողն է հասնում
6. Տեսե՞լ ես գյուղը հովտի մեջ մենակ
Եվ շուրջը փոված շքեղ պարտեզներ
7. Եվ միշտ սիրաշունչ երկինք կապուտակ
8. Ոսկի հասկեր
9. Լսե՞լ ես քաղցրիկ արտուտի երգեր
10. Եվ դու տեսե՞լ ես նորա գանձն անգին,
Դեմքով հրրեշտակ, հասակը փարթամ
Հարավո դուստրը, հրապույրն աչքերին,
Շրթունքը ալ վարդ, ժրպիտն անթառամ:

Թե՛ ամբողջ գեղարվեստական մթնոլորտը, թե՛ պատկերների զուգադիր համեմատությունը հուշում են, որ Հովհաննիսյանն անմիջական ստեղծագործական ազդակներ է ստացել Ա. Տոլստոյից: Հայ բանաստեղծի գործում բացակայում է պատմական մասը, ինչը հատկապես իշխող է Տոլստոյի խոսքի շարունակության մեջ:

Ըստ ամենայնի Հ. Հովհաննիսյանի բանաստեղծությունն անավարտ է, որովհետև նա կանգ է առնում հայրենի գեղեցկության հերթական թվարկման վրա: Տրամաբանական է, որ բանաստեղծությունը շարունակվեր և ամփոփվեր

այն հարցի պատասխանով, որով սկսվել էր: Թեև ամբողջ շարադրանքը «Տեսե՛լ էս արդյոք...»-ի պատասխանն է, բայց կառուցվածքն ամբողջացված չէ:

Հ. Հովհաննիսյան – Ա. Տոլստոյ առնչությունը Գյոթեի բանաստեղծության հիմնաշերտով հարցի պատմության մի մասն է: Մյուս մասը Հովհաննիսյանի և Տոլստոյի ստեղծագործությունների անդրադարձն է՝ կապված Հ. Թումանյանի և Բ. Սևերյանինի անունների հետ:

Թումանյանի «Parodia»-ն իր հերթին հիշեցնում է Սևերյանինի «Իսկ ճանաչո՞ւմ ես երկիրը» բանաստեղծությունը: Ռուս հեղինակի գործը գրվել է 1907-ին, Թումանյանինը՝ 1910-ին: Սևերյանինի ստեղծագործությունը ևս իր բնույթով պարոդիա է: Որպես բնաբան նա օգտագործել է Ա. Տոլստոյի «Դու ճանաչո՞ւմ ես երկիրը, ուր ամեն ինչ առատությամբ է շնչում» տողը և այն ամբողջ բանաստեղծության հետ ենթարկել ծաղրանմանության: Ահա այդ գործի տողացի թարգմանությունը.

*...Իսկ ճանաչո՞ւմ ես երկիրը, ուր խրճիթներն աղբատ են,
Ուր քաղցը մարդկանց ծանր մեղքի է մղում,
Ուր մշտական ողբ է, ուր դեմքերը մշտապես խիստ են,
Ուր վաղուց մարել է առողջ ծիծաղը,
Եվ ուր չկա ո՛չ դայրոց, ո՛չ բժիշկ, ո՛չ գիրք,
Բայց ուր՝ գինին է, սպանություն և... կապանքներ⁹:*

Թումանյանն իր հերթին, վերակրկնելով Հ. Հովհաննիսյանի «Իմ հայրենիքը տեսե՛լ էս, ասա՛» բնաբանը, շարադրանքի մեջ զետեղելով Հովհաննիսյանի բանաստեղծության առանձին տողեր, դրանք ենթարկում է ծաղրի ու քննադատության: Ահա Թումանյանի «Parodia»-ի սկիզբը.

«Իմ հայրենիքը տեսե՛լ էս, ասա՛...»

*Տեսե՛լ էս արդյոք այն բլուրները,
Ուր ճոխ ծաղկում է մշտական գարուն,
Ուր թալանում են մերոնք ու այլերը,
Ուր հոսում է միշտ արցունք ու արյուն:*

*Տեսե՛լ էս արդյոք այն այգիները,
Ուր իբրև գոհար խաղողն է հասնում,
Որից դատարկ են նրստում տերերը,
Որ միշտ ցեցերի գրպանն է լրցնում¹⁰:*

⁹ **И. Северянин**, Стихотворения, М., “Молодая гвардия”, 1990, с. 20.

¹⁰ **Հ. Թումանյան**, նշված հրատարակությունը, հ. 1, էջ 251:

Եվ այսպես ևս հինգ քառատող, որոնք Հովհաննիսյանից միջարկված բանատողերի ժխտումն են: Վերջը նման է սկզբին և օղակվում է նույն հարցումով՝ «Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա՛...»:

Թումանյանի «Parodia»-ն Սևերյանինի վերաբերմունքի հանգույն ի հայտ է բերում այն պատկերը, ինչը ժողովրդին դատապարտել էր արցունքի, արյան, թալանի, կռվի, կեղեքման, աղտոտության, խեղճության ու հետամնացության: Ինչպես Սևերյանինը, այնպես էլ Թումանյանը որոշակիորեն մատնանշում են գործողության կատարման տեղը՝ հայրենի եզերքը, ինչն արտահայտված է բանաստեղծական պատկերի նույն իմաստային շեշտով, կառուցվածքով ու շարադասությամբ: Համեմատությունն ամեն ինչ դարձնում է ակնհայտ.

Ի. Սևերյանին

1. ...Իսկ ճանաչո՞ւմ ես երկիրը...
2. ուր խրճիթներն աղքատ են
3. Ուր քաղցը մարդկանց ծանր մեղքի է մղում
4. Ուր մշտական ողբ է
5. Ուր դեմքերը մշտապես խիստ են
6. Ուր վաղուց մարել է առողջ ծիծաղը
7. չկա ո՛չ դպրոց, ո՛չ բժիշկ, ո՛չ գիրք
8. Բայց ուր... կապանքներ

Հ. Թումանյան

1. Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա՛...
2. դատարկ են նստում տերերը,
միշտ ցեցերի գրպանն են լցնում
3. Ուր թալանում են մերոնք ու այլերը
4. Ուր հոսում է միշտ արցունք ու արյուն
5. Տեսե՞լ ես ոնց են այնտեղ շարունակ
Կրավում, կեղեքում քոխվեն ու տերտեր
6. Նրստե՞լ ես արդյոք ավիին մոլորված...
Հարավի դուստրը — խղճուկ արարած,
Լռության կնիքն իրեն շրթունքին
7. Եվ ինքը ամբողջ կեղտի մեջ կորած
8. կըմատնի քեզ պոլիցիային

Ակնհայտ է, որ նույնն են երկու բանաստեղծների թե՛ մտահոգությունը, թե՛ վրդովմունքը: Նույնն է անցյալի բանաստեղծների ոգեշունչ տողերին ուղղված ժխտական ծաղրանմանությունը: Ըստ այդմ՝ գրեթե նույնն են խոսքի հնչերանգը, խոսքի ուղղվածությունն ու պատկերի կառուցվածքը:

Ոչ մի վկայություն չկա, թե Թումանյանն անպայման ծանոթ էր Սևերյանինի քանաստեղծությանը: Համենայն դեպս ռուս քանաստեղծի անվանն ու գործին նա դժվար թե անտեղյակ լիներ, որովհետև Սևերյանինը 1910-ական թթ. ամենահայտնի գրողներից էր: Նրա անունը 1911-ից տարածվեց որպես էգոֆուտուրիզմի հիմնադիր: Մինչ այդ նա հրատարակել էր քանաստեղծական ժողովածուներ: Իսկ արդեն ավելի ուշ՝ 1918-ի փետրվարին Մոսկվայի պոլիտեխնիկական թանգարանում կազմակերպված գրական երեկոյի ժամանակ, Սևերյանինն ընտրվեց «քանաստեղծների արքա»՝ հաղթելով այդ տարիներին շոնդալից հեղինակություն ունեցող այնպիսի երևելիների, ինչպիսիք են Կ. Բալմոնտը և Վ. Մայակովսկին: Միջանկյալ ավելացնենք նաև, որ ժամանակի հայ քանաստեղծներից Սևերյանինի ստեղծագործության հանդեպ հետաքրքրություն են դրսևորել նաև Վ. Տերյանը, Ե. Չարենցը, Գ. Աբովը: Նրա հանդեպ անտարբեր չէր նաև ժամանակի հայ մամուլը՝ «Մշակ»-ը, անգամ Կ. Պոլսի «Շանթ»-ը: Այս ամենը հայ գրական կյանքում ռուս քանաստեղծի ներկայության վկայություններ են: Թեև Թումանյանն ու Սևերյանինը միանգամայն տարբեր խառնվածքի, գրական տարբեր ուղղվածության ներկայացուցիչներ են, բայց հիշյալ քանաստեղծությունների թե՛ ակնհայտ նմանությունը և թե՛ նախորդ սերնդի ներկայացուցիչներին ուղղված միևնույն մոտեցումը հուշում են առկա ընդհանրությունը:

Ահա այսպես անակնկալ ու զարմանալի փոխանցումներով Գյոթեից ու Բայրոնից մինչև Ա. Կ. Տոլստոյ ու Հ. Հովհաննիսյան և նրանցից մինչև Ի. Սևերյանին ու Հ. Թումանյան քանաստեղծական խոսքը ուղենշում է իր հետագիծը և բառն ու պատկերը իրար կապակցելով՝ ստեղծում պոեզիայի ժառանգորդական շղթա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Հ. Հովհաննիսյան**, Երկերի ժողովածու, 4 հատորով, Ե., ԳԱ հրատարակչություն, 1964-1968, էջ 360:
2. **И. В. Гете**, Собрание сочинений. В 10-и т., т. 7, М., “Художественная литература”, 1978, с. 117.
3. **Байрон**, Собрание сочинений. В 4-х т., т. 3, М., 1981, с. 46–47.
4. **А. К. Толстой**, Полное собрание сочинений. В 2-х т., т. 1, “Советский писатель”, 1984, с. 531.
5. **И. Северянин**, Стихотворения, М., “Молодая гвардия”, 1990, с. 20.

Դավիտ Գասպարյան

ОТРАЖЕНИЯ ХУДОЖЕСТВЕННОГО ОБРАЗА СКВОЗЬ ВЕКА
В СТИХОТВОРЕНИИ ТУМАНЯНА «PARODIA»

Резюме

Ключевые слова: *родина, патриотизм, родная природа, красота природы, воодушевление, бедствие, нищета, разочарование, художественный портрет, традиция, история, время, Туманян, Иоаннисян, Северянин, А. Н. Толстой, Байрон, Гете*

Непосредственный источник стихотворения Туманяна «Parodia» (1910 г.) – первая строка стихотворения Иоаннеса Иоаннисяна «Видел ли ты мою Родину, скажи?» (1880). Стимулом к стихотворению Иоаннеса Иоаннисяна стало стихотворение Алексея Константиновича Толстого «Ты знаешь край, где все обильем дышит» (1840-е годы). В свою очередь Толстой ссылается на «Песню Миньоны», которая включена в начало 3-ей главы романа «Годы учения Вильгейма Мейстера» (1793-1798 гг.) Иоганна Вольфганга Гете и на произведение Джорджа Гордона Байрона «Абидосская невеста» (песнь первая, часть первая, 1813 г.). «Parodia» Туманяна перекликается также с пародией Игоря Северянина «А знаешь край, где хижины убоги» (1907 г.).

В докладе показаны психологические особенности формирования и развития идеологических основ восхищения и разочарования Родиной в произведениях указанных авторов, завершением которых является «Parodia» Туманяна.

Davit Gasparyan

REFLECTIONS OF ARTISTIC PORTRAITS THROUGH
THE CENTURY IN THE POEM “PARODIA” BY TUMANYAN

Summary

Key words: *homeland, patriotism, native nature, beauty of nature, inspiration, disaster, poverty, disappointment, artistic portrait, tradition, history, time, Tumanyan, Hovhannisyann, Severjanin, A. K. Tolstoy, Byron, Goethe*

The immediate source of the poem “Parodia” by Tumanyan is the first line of the poem “Did you see my homeland, tell me?” (1880) by. The impetus for Hovhannes Hovhannisyann’s poem became a poem of A. K. Tolstoy “Do you know the land where everything abounds breathes” (1840). In turn, Tolstoy refers on “Mignon’s Song”, which is included in the beginning of the 3rd chapter of novel “Years of teaching Wilhelm Meister” of Johann Wolfgang Goethe (1793-1798), and on the product of George Gordon Byron “Abydos bride” (song one, part one 1813). “Parodia” by Tumanyan also echo with the parody of Igor Severjanin “And you know the land, where the huts are wretched” (1907).

The report shows the psychological characteristics of the formation and development of the ideological foundations of admiration and disappointment for the Motherland in the works of these authors, the completion of which is «Parodia» by Tumanyan.